ՁՈՒԱՂԻՆ ՏԱՐԻ 5 ՅՈՒՆԻՍ 1871 ՇԱԲԱԹ ԹԻՒ 40

ՄԵՂՈՒ

Կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերը։ — Բաժանորդագրութեան ւսւղն է Կ. Պոլիս Գամանթօ խանի վերնայարկ Թիւ 38։ Դուքսէն եկած ամենայն յօդուածք կը կրճատուին ըստ հարկին։ Նամակներն ու յօդուածները պէտք է ուղղել առ խմբագիրը։

Գին տարեկան 400 դրամ կանխիկ ղրշ. 400. Վեցամսեայ 50 Թերթ ղրշ. 30. Գաւառաց համար 400 Թերթ 1 լիրա. 50 Թերթ 1/2 լիրա։ Մէկ Թերթը 30 փարայ։ Հրատարակելու համար եկած ծանուցմանց սակարկութիւն կըլլայ։

ՄԵՐ ԱԶԳԻՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ազգային Սահմանադրութեան տրդարձի ոճնախմբութեան հոդնութիւնն առնելնուն եւոքը կուգամ այսօր, ինչպէս ըսի կանխաւ, իմ ազգայիններէն այն ծանր պահանջումն ընելու զոր ծանուցած էի։

Մենք հայերս, թէպէտեւ Եւրոպան ու սա մեր բնակած աշխարհին մէջ մեզի դրացի ազգայ հետ ուչի ուչով բազդատենք ինքզինքնիս նիւթական մասին մէջ։

Յաւօք սրտի պիտի տեսնենք որ սակէ քառասուն յիսուն տարի առաջ ինչ վիճակ որ ունէինք Տաճկին, Պուլկարին Յոյնին, Հրեային բազդատմամբ, այսօր բոլորովին անոր հակառակն եղած է։ Առաջ Հայերը ընդհանրապէս անոնց ամենէն հարուստ էին. այսօր ալ անոր հակառակ անոնց ամենէն աղքատ եղած ենք։

Ո՛վ է այն Հայը որ մտնէ կղզինեըուն եւ Վոսբորի շոգենաւները ու տեսնելով թէ անոնց մէջ առաջին կարգի տեղերը բազմողներուն ամենամեծ մասը օտարազգիք են ու սիրտը չցաւի։ Ո՛վ է այն Հայը որ Պօյոյ և անոր շրջականերուն մէջ քն պատուաւոր տեղերը գտնըվածծ մեծակառոյց և հոյակապ տուներուն, ամարանոյներուն ամենամեծ մասը օտարազգիներուն ըլլալը տեսնէ ու իմանայ և չը տրտմի։ Ո՛վ է այն Հայը որ մեր բնիկ հայրենեաց մէջ բնակող ազգայնոց թշուառութիւնը տեսնելէն ետև մայրաքաղաքներու մէջ բըռնակողներուս ալ անոնց օգնելու անկարող վիճակի մը մէջ գտնըվիլը տեսնէ ու չը յուսահատի անոնց վիճակին վրայ. ո՛վ է այն Հայը որ տեսնէ ընդհանուր Տաճկաստանի վաճառականութիւնն ու սեղանաւորութիւնը այսօր ամենամեծ մասամբ օտարազգիներուն ձեռքն անցած ու չը վշտանքնի. ո՛վ է այն Հայը որ հրեայ սահիկ և յոյն կիներուն գրեթէ ամենուն վրայ գտնէ մէկ անդամանդ մը կամ կարմիր մը սակի գտնըվիլը, և անոնց չքեղ կերպով հագուած ըլլալը տեսնէ և հայ կիներուն ու աղջիկներուն համար ալ ղայն չը փափաքի։

Կը հաւատամ որ այս ամենուն ուշ դնող հայը սրտին խորէն կը հառաչէ և միշտ ցաւ կը կրէ. վասն զի ներկայէն ապագան ալ խելամտելով կը համոզվի անշուշտ թէ մեր այս վիճակը օր ե օր ղմեզ աւելի աղքատութեան տանելով աղքատութիւնն ալ մեզ՝ի կորուստ բնակիչ պիտի տանի անպատճառ։

Կը հաւատամ, ընթերցող բարեկա՛մ, որ այս ճշմարտութիւնը չքեղ ալ պիտի տըխրեցընէ ....

Բայց՝ երանի թէ մեր ամեն մտածութեանց, մեր ամեն գործած բարոյական ցաւերուն պէս այս ճշմարտութեան ազդած ցաւն ալ վայրկենական չըլլայ կամ թէ այնպէս կարծելով թէ ճար մը չենք կրնար ընել մեր այս վիճակն՝ի բարւոյն դարձընելու՝ չը յուսահատինք լինչպէս ցարդ ըրած ենք։

Անդարմանելի չէ այս ցաւը, աղնիւ հայե՛ր, միայն թէ սրտի մտօք անոր դարմանք գտնելու և զայն գործածելու աշխատութեան յանձնառու ըլլալու ուխտ ընենք։

Դարմանը՝

Մեր դանդաղութիւնը, անօգուտ և ջնասակար զբաղմունքներով ժամանակ անցընելը, իրար խաբելով չահելու հնարքը մտածելը, հետևաբար իրարու վրայ վստահութիւն չունենալը, մեր դպրոցներէն աւելի բանաստեղծները քան թէ գործաւորներ հասցընելու հետաքրքրութիւնը իսպառ վերցընել, մոռնալ։

Եւ անոր տեղ

Ժրութեամբ աշխատիլ, օգտակար և չահաբեր զբաղմունք ճարել, իրար չը խաբելով իրարու ձեռնտու ըլլալ և ինկողը կանգնեցնելու աշխատիլ, Հայը օտար ազգերէն աւելի սիրել և անոր օգուտը իրրև իր անձնական օգուտը ճանչնալ, վարժարաններու մէջ օգտակար և արուեստական ուսումներու դաս դնել և ամեն գործի մէջ արթուն և խոհուն ըլլալ։

Ահա՛ մեր դիտցած դարմանները, զոր կարող կը կարծենք մեր ազգը եթէ ոչ չափազանց հարուստ ընելու դէթ իր քառասուն յիսուն տարի ունեցած հարստութեանը վերստին տիրացնելու։

Ոմանք Տէրութեան պաշտպանութիւնն ու ձեռնտուութիւնը պէտք նշանակեն պակաս դառնալով զանի կամ բաստանեն իրրև արդել իրենց ձեռնարկութեան յաջողութեանը։ Մտածելու են առանք թէ օտար ազգերն ալ միևնոյն օրէնքին ներքև կը գործեն հոս. համոզվելու են թէ Տէրութիւնն ինչ որ կարելի է ընել իրեն՝ կընէ միշտ և այն բաներն ալ այն օրէնքներն ալ, այն դիւրութիւնները ալ որ տակաւին պէտք են, ժողովուրդին օրէ օր հարստանալո՛վը միայն կարելի է գործադրել։

Ուստի ո՛չ ոք ամբաստանենք, ո՛չ ոք մեղադրենք. եթէ մեր դրացիներն օրէ օր կը հարստանան ու մենք կ՝աղքատանանք ընդհարապէս՝ մեղաւորը մենք ենք և ոչ այլ ոք։ չէ կարելի ուրանալ սակ։

Սրդ իմ աղնիւ ազգայինք, սթափվինք այն թմրութենէն որ մեզ կապել ու կաչկանդելով դէպ՝ի մեռելութիւն կը տանի և ուխտ ընենք աշխատելու, յարաև աշխատելու, խնայութեամբ վատնելու թէ մեր ժամանակը թէ մեր վաստակածը.

Սմեն բան հոս աս աշխարհիս մէջ ստակով և պատուով կըլլայ. ինչպէս անհատի մը զօրութիւնը, նոյնպէս ազգի մը զօրութիւնը իր նիւթական ու բարոյական հարստութեանը վրայ կը կայանայ. լրջաբար այս երկուքը ձեռք բերելու աշխատինք և քիչ առնէն կարելի է տեսնել ազգին վիճակին փոփոխութիւնը դէպ՝ի բարեկեցութիւն, որով և անհատներու կենաց ընթացքին փոփոխութիւնը դէպ՝ի բարօրութիւն։

Ծաղիկ ըլլամ . . . բայց առանց քեզ
չդնեմ հոտ .
Լայս թէ մութ՝ քուն՝ շուքդ պիտի
չանհետի ,
Հառաչելով ուշ պիտ՝ ըլլամ ոսկը
ու դի .
Ելմիդ վարդերն չը թողամ
քեզ դրկեմ ես ,
« Կեանք կուտաս՝ սիրտ թէ տաս »
ըսին եւևէս :

Գ . ԳՈՒՐԵԱՆ

Բ Ե Կ Ա Ն Ա Ն

ՀԱՐԲՈՒԽ

— Ա՛ս ինչ փորձանքի հանդիպեցանք Աստուածդ սիրես . Օրագիրը դեռ իր ծիւրական ախտը չէ լքած , առ քեզի հարբուխի վրայ դրկէ : Բայց պարոն խմբագիրներ , ներեցէ՛ք , մենք բժիշկ ըլլալու միտք չունինք ծիւրական ախտը , հարբուխը ձերն ըլլայ , մեզի լուր տուէք , եթէ ունիք :

Կեցի՛ր . ընթերցող , այս հարբուխը ձեր գիտցածը չէ , ասիկայ նորելուկ հիւանդութիւն մ՛ է , և դժբաղդաբար ազգայիններուն դրեթէ մեծ մասը այս հիւանդութենէն բռնըված են :

Մեծերէն բծնէ՛ . մենչև պզտիկները դնա՛ , ամենքն ալ հարբուխ ունին . վարդապետներէն (մօրուսէն) բռնէ՛ մինչև ժամկոչները լկէր . հարուստներէն (քիթէն) բռնէ մինչև աղքատները դնա՛ . խմբագիրներէն (օճիքէն) բռնէ մինչև ցրուիչները , վերջապէս հարիւրամեայ ծերուններէն մինչև նորածին տղայ դնա . ամենն ալ հարբուխ ունին :

— Ի՞նչ տեսակ հարբուխ է աս :

— Կարդա՛ , հասկըցի՛ր :

Ա՛հա պատանի մը որ հօրն ու մօրը թախանձանքին չկրնալով դիմանալ ա՛ մուանացեր է . և քիչ ժամանակէն զա՛ուակ մ՛ է ունեցեր , հիմա լուսաւորչական օրինաց համեմատ այդ տղան մը կրօտուելու է , եկեղեցական օրինաց համեմատ ալ մկրտութիւնը տակով կըլլայ չքաւորութեան օրինաց համեմատ ալ ծնողքին հայրը ժամանակ չունենար մկրտութիւնը հանդիսաւոր կերպով կատարել , ու տղան ալ երեք ամիս առանց մկրտութեան կը մնայ : Բարեկամները , պզտիկանները կը հարցնեն :

— Տղուն անունը ի՞նչ պիտի դնենք :

— Յայտնի չէ :

— Ինչո՞ւ այդչափ ուշացուցիք :

— Պէ՛ ճանըմ , տղան հարբուխ ունի քիչ մը :

— Քանի՞ օրէ ՚ի վեր :

— Գործդ դնա աղբար , հարբուխով ծնաւ լշտէ . ինչ գիտնամ :

Աստուած բժշկութիւն տայ :

***

Ա՛հա կը տեսնես երիտասարդ մը

ՊԷՏՔ Է ՄԵՌՆԻ

Դժգոյն գիշեր մ՛էր քաղցրաբոյր
աշնային ,
Երկինքն աստղեր՝ սիրոյ վերքեր
յոլային .
Դեղնած ու չոր թերթից լուսին
իր բնկերիկ ,
Եաղն կը ցօղէր ամրան վարսիցն
աղերսիկ .
Շամբերուն մէջ կը սողոսկէր
ուղած մ՛անհետ ,
Կայծեր՝ աստղեր կը խաղային
ալեաց հետ .
Սիւքը կ՛խաղար տերևներուն
հետ թեթև .
Կը ջոյեր գլուխ՝ այրած ճակատս
շղարշէ թև՝
Նա իր շնչովը պիտ գոհ ընէր
կը կարծէր . . .
Ա՛յլ կարծարծէր սրտիս սիրոյն
բիւր կայծեր . . .
Ոգի մ՛ անցաւ սրտէս՝ թողուց
հոն ստուեր ,
Անշէջ հուր մը . . .միայն գիտեն
այս աստղեր :
Համբոյրի մը յիշատակն էր
սիւքին չունէ .
Գունատ ճակտին տխրիկ պատկերն
այս լուսին .
— Ո՛հ , կեանք պէտք է տալ՝ սիրտ
որուն թէ կուսին : —
Կը սիրէ նա . նայուած քիդ մէջ
կը թաւալի .
Ո՛հ , ինչ է նա — ձիւնով չինած
մի անդրի ,
Վսեմ ճակտին վրայ երկու
աստղեր վառ՝
Եթէ սիրէ , հալի , թ՚ատէ՝
կըտրի սառ . . . : —
Լոկ նուր աչեր՝ ժպիտ արցունք
տեսայ նախ ,
Կուրծս ուռուցիկ լանջ մը ղգայ
սիրաբախ ,
Սիրոյ մրմունջ՝ հառաչ լսեցի
բեկբեկ խօսք ,
Դողդոջ ու դիրկ պաղ ձեռք
մ՚ղգայ ձեռքս սոսկ
Թևերուս մէջ լոյս մը՝ հով մը
մարեցաւ ,
Լակ չէր նա , այլ սէր՝ հուր՝ չունչ
ժպիտ ցաւ .
Գոհար աչեր՝ վարդ այտ՝ այլ ինքն
էր Թախիծ .
Ա՛յն գիտաւոր աստղէն քար մը
մնաց ինձ
Յիշատակ մը դերեզման մը . . .
սուրբ սաիոր ,
Ուր հեկեկով սիրտս կընէ
միշտ Թաւիոր .
— Երանի՛ Թէ ըլլամ ես չիթ
մ՛ արտասուք
Ու անհետիմ հոս դամբանիդ
քով սիրատուք .
Երանի Թէ խոտ մը ըլլամ ես
ցամքիմ հոս

ՔՐԻՍՏՈՍԵԱՆ ՀԱՒԱՏՔԸ ԵՒ ՄԱՐԴԱՐԷՒՆ ԿԱՐ ԵՂԵՐ ՄԻՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՑ ԱՆԱԹՕԼԻ ԼՐԱԳՐԷՆ ԿՐՃԱՏՎԱԾ

Հասան էֆէնտին ու Քօքօնա Մարիան պիտի ամուսնանան եղեր : բայց սա պայմանով որ Քօքօնա Մարիան ամուսնանալէն առքն ալ խրիսթիան պիտի ձնայ . մինակ Հասան էֆէնտիէն ունեցած զաւակները տաճիկ պիտի ըլլան :

Հասան էֆէնտին իր կինը ձգէ , կամ ուրիշ կնոջ մը հետ ամուսնանալ ուզէ նէ Քօքօնա Մարիային հինգ հազար ղուրուշ պիտի տայ . բայց Քօքօնա Մարիան ուրիշ մարդու մը հետ յարաբերութիւն ունենայ նէ՝ Հասան էֆէնտիին տասանորդ ալ չպիտի տայ :

Անցեալ կիրակի հարսնիքը կը բըռնըվի , Հասան էֆէնտին քանի մը տաճիկներ կ՛առնեն վեհապ կը բերեն :

Իմամ էֆէնտին կուգայ ասոնք Աստուծոյ հրամանովը ու Մարգարէին դաչինքովը տաճկի նիքահով իրարու հետ կը կապէ և հարսնեւորներն ալ Աստուծոյ համար վկայ կը դոչէ . անոնք ալ վկայ ենք կ՛ըսեն :

Իմամ էֆէնտին իր պաշտօնը լմընցընելէն առքը « էհ , կ՛ըսէ , ըստ Մահմետական օրինաց Հասան էֆէնտին երեք անիկ ըրինք . հիմայ ըստ քրիստոնէական օրինայ Քօքօնայ Մարիան երկանիկ ընենք :

Ա՛յս խօսքը կ՛ըսէ դուրս կ՛ելնէ՝ ու պահ մը ետքը մաշտոցը ձեռքը ներս կը մտնէ :

Ա՛յս իմամ էֆէնտին առաջուց Յոյն քահանայ մըն է եղեր :

Ա՛յս անգամ իմամ-բաբասը կամ բաբաս-իմամը կ՛ըսկսի յունարէն պսակի խուհուրդ կատարել Հասան էֆէնտիին ու Քօքօնա Մարիային վրայ :

Յայտնի բան է որ մանչուն ու աղջկան ծխատէրը այս բաբաս-իմամին ըլլալով երկու հոգիի գատ գատ առնելիք սուակն ինք առած է : Ո՛վ չը փափաքիր ասանկ պաշտօն մը ունենալու :

Ա՛ս ալ յայտնի է որ հարկաւ այս բաբաս-իմամը հարիւրին քսան կամ եռասուն ղեղչ ըրած է : Ո՛վ չը փափաքիր ասանկ աժան կերպով պսակիլ :

Անաթօլին կըսէ թէ այսպիսի ամուսնութենէ մը ծնանելիք տղայոց հետեւելիք կրօնքին համար Քրիստոսի և Մուհամմէտի մէջ տեղը ծագելիք կռիւին մենք չենք խառնըվիր :

Մեղուն ալ կ՛ըսէ թէ այս բաբաս-իմամ էֆէնտիին պատճառաւ Եէյխ-իւլ-իսլամ էֆէնտիին ու Յունաց պատրիարքին մէջ տեղը ծագելիք կռիւին թող խառնըվի ու՝ երկինքի մէջ ծագելիք կռիւին չը խառնըվինք հոգ չէ , հոն ալ Սարգիս Պուխարացին կը խառնըվի :

ՀԱՅՐԸ ՈՐԴՈՒ

ՎՃՌՈՒԹՅՈՒՆ ՂՈՊԱՆՈՒՆ

Ի ՉԱՓԱՀԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ

Ղոպանը ոտքի ելավ, մոտեցավ սեղանին, վերցրեց մի թուղթ ու կարդաց.

«Ես՝ Ղոպանս, Ղոպանի որդի, Ղոպանների ցեղից, Ղոպանների գյուղից, Ղոպանների գավառից, Ղոպանների աշխարհից, Ղոպանների երկրից, Ղոպանների տիրապետության տակ գտնվող, Ղոպանների ազգից, Ղոպանների հավատից, Ղոպանների սովորությունների հետևորդ, Ղոպանների լեզվով խոսող, Ղոպանների գրականությունը կարդացող, Ղոպանների երգերը սիրող, Ղոպանների պարերը պարող, Ղոպանների հագուստներ հագնող, Ղոպանների ուտելիքներ ուտող, Ղոպանների խմիչքներ խմող, Ղոպանների ծխախոտ ծխող, Ղոպանների ձիերով ձիավարող, Ղոպանների զենքերով զինված, Ղոպանների դրոշի տակ կռվող, Ղոպանների հայրենիքը պաշտպանող, Ղոպանների ազատության համար մարտնչող, Ղոպանների անկախության համար զոհվող, Ղոպանների ազգային գաղափարներին նվիրված, Ղոպանների ազգային գաղափարներին հավատացող, Ղոպանների ազգային գաղափարներին ծառայող, Ղոպանների ազգային գաղափարներին նահատակվող, Ղոպանների ազգային գաղափարներին զոհվող, Ղոպանների ազգային գաղափարներին նահատակ գնացող, Ղոպանների ազգային գաղափարներին զոհ գնացող, Ղոպանների ազգային գաղափարներին նահատակ եղած, Ղոպանների ազգային գաղափարներին զոհ եղած, Ղոպանների ազգային գաղափարներին նահատակ լինելիք, Ղոպանների ազգային գաղափարներին զոհ լինելիք, Ղոպանների ազգային գաղափարներին նահատակ լինելու, Ղոպանների ազգային գաղափարներին զոհ լինելու, Ղոպանների ազգային գաղափարներին նահատակ լինելուց հետո, Ղոպանների ազգային գաղափարներին զոհ լինելուց հետո, Ղոպանների ազգային գաղափարներին նահատակ լինելուց առաջ, Ղոպանների ազգային գաղափարներին զոհ լինելուց առաջ

գործը կը շարունակէ։ Բարերար մը իրեն նուէր մը կ՚ընէ. կամ իրեն կամ վարժարանին. երկուքը մի ևնոյն բանն է, խարուֆիւն չը կայ. վարժարանէն ոտաս տասն ևս հինգ աղջիկ առածին պէս չի-տակ այդ բարերարին տունը կերթայ, հոն երեկոյթ մը կը տրվի. երեկոյթ ըսինք բայց բուն բառը դիշերեկոյթ մ՚է որովհետև մինչև լոյս քշած է։ Մինչև առտու երեկոյթ կընէ՝ դարձեալ իր գործը կը շարունակէ։

Ասոր վրայ պաշտպաններուն մէկ երկու-քին ձեռքը կը քաշվի, ինքը դարձեալ չը վճատիր։ Գնա հկու, ամառ կուգայ. ամեն մարդ տարեդարձի կը պատրաստվի։ Պ. Փանոսեան այս առթիւն ալ օգուտ քաղելու ճամբան դիտէ։ Կը-նէ հայերուն դուք վայրենի էք, ես ձեր մէջը չեմ մտներ, ես իմ աղջիկներս ձե-ղի ձրի չեմ ցուցըներ կըսէ ու իրենե-րուն համար յատուկ տարեդարձ մը հաս-տատելով կառնէ անոնք Զիֆթի-սուլին չըջափակ տեղ մը կը տանի։

Ով որ այս աղջիկները, այս աղջիկ-ներուն պարելու և դաշնակ զարնելու մէհարէթը տեսնել կուգէ՝ էն քիչը կէս ըր-ա վճարելու է. ներս մտնողը ինչ աղ-դէ ըլլայ նէ հոդ չէ, ինչ մարդ ըլլալը ամենեւին փոյթ չէ։

Իսկ այս աղջկանց ծնողքը կամ եղ-բայրը կամ ազգականը ըլլալով կէս լիրա տալու կարողութիւն չունեցողը դուրսը պիտի մնայ եղեր, աղ. ալ հոդ չէ։

Անոնք ալ իրիկունը տուներնին ի-րենց աղջիկներէն կիմանան հոն ինչեր անցած ըլլալը։

Կամ չէ նէ՝ թող ասդին անդին խյ-նան, մուրան կուրան, ժամը թապախ պտըտցնեն, դրացիներէն փոխ առնեն, — տուող ըլլայ նէ — վերջապէս կէս լի-րան ճարեն ու երթան իրենց աղջկանը պարելուն, երգելուն, ցատկելուն քըն-նութեանը հանդիսին ներկայ գտնըվին։

Ով որ կրցաւ ինչ և իցէ միջոցով այս ստակը ճարել՝ կրցաւ ալ ներս մտնել. ով որ չկրցաւ՝ դուռն երեսին գոցեցին։

Թադուհի տուտուն հազիւ մէճի-տիէ մը կրցեր է ճարել. անով մինչև այս եղեմական դրախտին դուռը կրցեր է գալ իր քրոջը հետ. բայց դրախտին ճամբուն վրայ հրեղէն սրով հրեշտակ մը կայնած տեսնելով վախցեր ու դուրս ե-լեր, դռանը քովիկը նստեր ներսէն լուր կսպասէ։

Ներսը հարսնիք կըլլար, դուրսը ճիշդ աղջկան տուն դարձեր էր։

—Գուզում աղա, իչերաէ պէնիմ աղջիկիմ նէ՞ եաիըյօր։

—Էօֆ ֆ պայըլըմ . . . . .

—Քա՛, ոաքդ պագնեմ, աղջիկս մարեր է, նէ՛րս վազէ։

—Եասադ տըր դատը՛ն.

Քա թող տուր, աղջիկիմ պայըլ-միշ եղեր է.

—Նօ՛ն, մատա՛մ էլ տա՛նա

Քա քուրուկ, աս ֆըլէնկը ինչէ՛ն դիտէ քու անունդ ելմաս ըլլալը։

Քալէ մի ֆօվասէ, տէն էքի թի-բօթա

—Մա բէռ-քէ նօն՛ լաչաթէ քուէս-թա տօննա

—Էյ՛, սինեօռ վարայ վէր

—Սրչա՛ս, սըչա՛ս

—Բէ՛ս, իչերտէ նէ՞ օյնայուպ տուր

Վէր եարըմ լիրա կիր իչերի։

Քա ատոնց ո՛ր մէկուն խօսք պիտի հասկըցընենք. ա՛խ, ի՞նչ ըսեմ. ծա-կուկ ծակուկ գայ անոր հարիկը որ մէյ մ՚ալ կամ աղջկանս չըթողու որ տէյ աս տեղուանքը գայ. կամ չէ նէ ինծի ալ ատակ տայ որ ես ալ ներս մտնեմ ու աղջկանս քովը ի վեր ըլլամ։

Դռանը տակը աս կռիւները աս լացերն ու ատաման կրճըտելը կ՚ըլլայ ու պիտի ըլլայ. իսկ ներսը փափկութեան դրախտին մէջէն ալ սա ձայնը կուգայ. «Եկայք օրհնեա, վճարողք, ժառան-գեցէք զՀանդերձեալն ձեզ ուրախու-թիւն։

Բայց Պ. Փանոսեան այսչափով գոհ չըլլար. անանկ կէս կտոր լիրաներով իր գործը չըլլիներ. կուզէ կըլոր դուսմար մ՚ալ ձեռք բերել,

Ա՛յն օրը որ հրատարակեր էր, թէ Ռուսիոյ կայսրը Ռուսաստանի հայոց անպիտանութեանը համար «ըստ Ման-ղումէի» Ղա իպեան վարժարանին յատ-կացուցած 11 հազար ռուպլին վճարե-լը դադրեցուցեր էր, այն օրէն հնարք մը մտածեր էր այդ դումարը լման չէ նէ ալ՝ մասամբ իրեն յատկացընե-լու։

Ա՛յս հանդէսին առթիւ Ռուսիոյ դեսպանէն 1000 ֆռանք կը բերընէ։

Իրիկուան ժամ տասնին աղջիկնե-րը չոգնաւ կը մտնեն ու Սամաթիա կը դառնան։

Հիմայ կը հարցընենք Հայկական ընկերութեան. Թէ որ Պ. Փանոսեան հայերուն համար վայրենի են, ես իմ աղջիկներս անոնց չեմ հաւատար, ես գատ տեղ պիտի տանիմ անոնք չըսեր ու ձեզի հետ միանար Հիւնքեար խա-կէլէսին դարնէ՝ քանի՞ վարայ պիտի տայիք անոր. չըտալէն ետքը անոր աղ-ջիկներուն երեսէն դո՛ւք ստակ պիտի վաստըկիք. այնպէս չէ՞։

Է՛հ, Պ. Փանոսեան իր գործը դիտէ։ Մէկ անգամ հայերը վայրենի են ըսելով գնացէք հաշիւը իմացէք, նայեցէք քանի՞ հարիւր լիրա վաստըկե-ցաւ։

Բայց չըլլայ որ սխալիք ու երթաք հաշիւ ուզէք. վարժարանը իրն է, ա-նոր ծախքն ու եկամուտն ալ իրն է, ա-նոր մարդ տեղեակ չըկրնար ըլլալ։

Հիմայ խմբագիրին մէկն ալ կը մտածէ թէ արդեօք ե՞ս ինչ ծանր խօսք մը ըսեմ Հայերուն որ ես ալ քանի մը հարիւր լիրա վաստըկիմ։

Պարօ՛ն, հետդ աղջիկ չունիս նէ չես կրնար վաստըկիլ, պարապ տեղը դէշ մարդ մ՚ըլլար Հայերուն հետ,

ՕՆ ԱՆԴՐ ՅԱՌԱՋ

Վերաքննելի Սահմանադրութեան խնդիրը պիտի լուծէ ընդհանուր ժո-ղովը ընդհանուր ժողովը պիտի լու-ծէ վինդէրն վերաքննելի Սահմանա-դրութեան։

Ա՛ս կը հարցնեն ազգայինք։

Մարդ արէ չենք, սակայն ճշմարիտը խօսելով երկուքէն մէկը լուծվի տէ, որն ըլլայ նէ՝ ըլլայ։

Ա՛ս կը պատասխանեն դարձեալ ազ-գայինք։

Ոմանք կը վախնան թէ այս տաք օրերու մէջ խնդիրը փոխանակ լուծվե-լու պիտի հալի. ասոր համար քանի մը օրէ ի վեր անդին ասդին մասնաւոր ժո-ղովներ կըլլան լուծելու համար Ընդհ. ժողովը և վերաքննելի Սահմանադրու-թեան խնդիրը, որք իրարու հետ ան-քակտելի կերպով կապված մնացած են։

Եթէ անհնար ըլլայ զանոնք իրարմէ բաժնելով զատ զատ լուծել, երկուքը մէկէն պիտի լուծեն։

Օն անդր յառաջ։

ԴՐԱՄԱԿԱՆ

Անդղիական լիրա . անունը կայ բնիքը չկայ
Նաբօլէոն . . . անունն ալ չկայ
Իմբէրիալ ռուս . ձեռք անցնելու չկայ
յոյս .
Պղինձ օքան 30 դրչ.

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Դէպ ի մօտիմթրանները
Դէպ ի գինետուները
Դէպ ի թէրտէրները

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Անկատուխութիւն
Ա.ւանակները
Տգիտութիւն
Անգործութիւն
Կեր ու խում
Շատախօսութիւն

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Ճամբորդները
Մօտայները
Շոգենաւները

Հօրը մօրը մանածը ծախելով հոս փախչող քօմիւնները.

Մուչէն ու վանէն տոպրակ տէյ-նէք ու պինդ երես ունեցող մուրաց-կաններ.

Սրաբիայէն սուտ խենդ ըլլալով, վանքին հաւերը ուտող չըպլախ մու-խթաֆաններ.

Խելք՝ չատուց է եկած չէ.

ԽՄԲԱԳԻՐ ՏՆՕՐԷՆ
Ց. Գ. ՍՎԱՃԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱԿԵԴՈՆԻՈՑ
ԱՍՄԱ-ԱԼԹՔ ՃԱՄԼԸ-ԹԱՆ ՄԻՋԻՆ ՅԱՐԿ ԹԻՒ 8